ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ
Ընտրությունների դիտորդական առաքելություն
Հայաստանի Հանրապետություն
Խորհրդարանական ընտրություններ 2007

ՀՀ, Երևան, փ. Երվանդ Քոչարի17/2
Հեռ.: +374 (0)10 552399/552499/554399
Ֆաքս: +374 (0)10 554299
Էլ-փոստ: office@odihr.am

Միջանկյալ զեկույց թիվ 2
29 մարտի – 17 ապրիլի, 2007թ.

I. ԱՄՓՈՓՈՒՄ

- Թեկնածուների գրանցումը կատարվել է ներառական ձևով: Ապրիլի 4–ին համամասնական ընտրակարգով գրանցման դիմած բոլոր քսանչորս կուսակցությունները և մեկ դաշինքը գրանցվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից (ԿԸՀ): Մեծամասնական ընտրակարգով 41 Ընտրատարածքային հանձնաժողովներում (ԸԸՀ) գրանցվել է 135 թեկնածու:

- Համամասնական ընտրակարգով գրանցված մրցակիցներից շատերը գերազանցել են իրենց ցուցակներում կանանց ներգրավվածության 15 տոկոսի իրավական պահանջը:

- Ընդհանուր առմամբ, ԿԸՀ-ն աշխատում է արդյունավետ, տեխնիկապես լավ հագեցած է և պատրաստված արդյունքների աղյուսակավորումը համակարգելու և ընտրությունների օրը զեկուցելու համար, և պրոակտիվ է ընտրացուցակների և ընտրությունների օրվա ընթացակարգերի մասին ընտրազանգվածին տեղեկացնելու հարցում: ԸԸՀ-ները նույնպես արդյունավետ են աշխատում: Ոստիկանությունը՝ պատասխանատու լինելով ընտրացուցակների համար, ջանքեր է գործադրում ցուցակներում տեղ գտած անճշտություններն ուղղելու համար:

- Ապրիլի 8-ին մեկնարկեց պաշտոնական քարոզարշավը: Քարոզչությունը չափազանց ակնհայտ երևում է Երևանում, սակայն մայրաքաղաքից դուրս այն պակաս տեսանելի է: Հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի եթերաժամը հատկացվել է ըստ ԿԸՀ-ի կողմից անցկացված վիճակահանության: Հեռարձակումները մեկնարկել են ապրիլի 10-ին:

- Կուսակցությունների և թեկնածուների սեփականությանը վնաս հասցնելու չորս միջադեպ՝ ներառյալ Բարգավաճ Հայաստան կուսակցության Երևանի երկու թաղամասային շտաբերում պայթուցիկների բանեցումը, գտնվում են ոստիկանության հետաքննության ներքո:

- Մարտի 25-ին վախճանվեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, այնուհետ՝ ապրիլի 4-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը վարչապետ նշանակեց Սերժ Սարգսյանին: Ապրիլի 11-ին նախագահի կողմից նոր վարչակազմ նշանակվեց, որն էականորեն չի տարբերվում նախկին կառավարությունից:

II. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ա. ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Ապրիլի 4-ին դիմում ներկայացրած բոլոր քսանչորս կուսակցությունները և մեկ դաշինքը գրանցվել են ԿԸՀ-ի կողմից: Որևէ ցուցակի ոչ մի անհատական թեկնածուի գրանցում չի

մերժվել: Թեկնածության առաջադրումից ի վեր որոշ ցուցակներում տեղ գտած ինքնաբացարկների արդյունքում ամենամեծ ցուցակներն արձանագրվել են Օրինաց երկրի (120 անուն), Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) (113), Բարգավաճ Հայաստանի (112) և Հանրապետական կուսակցության (111) մոտ:

Բ. ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Մինչև մարտի 28-ը որպես թեկնածու գրանցվելու համար փաստաթղթեր ներկայացրած 141 անձանցից 135-ը որպես թեկնածու գրանցվել են ԸԸՀ-ի նիստերում ապրիլի 3-ից 4-ն ընկած ժամանակահատվածում (տեղավորվելով ապրիլի 7-ի վերջնաժամկետում): Հինգն ինքնաբացարկ են հայտարարել նախքան գրանցումը, և մեկ գրանցման մերժում է արձանագրվել անհրաժեշտ փաստաթղթերի թերի կազմով ներկայացման պատճառով:

Թիվ 19 ԸԸՀ-ում (Վաղարշապատ) թեկնածուների գրանցման շուրջ ստեղծված թեժ իրավիճակը, ըստ երևույթին, ծագել է տեղական սուր մրցակցությունների արդյունքում: Ընտրատարածքում որպես թեկնածու չորս դիմորդներից երկուսի գրանցումը տեղի ունեցավ միայն այն բանից հետո, երբ ապրիլի 3-ին ԸԸՀ-ի նիստում տեղի ունեցած վեճի արդյունքում անհրաժեշտություն առաջացավ հետաձգել որոշման ընդունումը մինչև հաջորդ օրը: Ապրիլի 7-ից 8–ն ընկած գիշերը հրդեհի արդյունքում վնասվել է Վաղարշապատ քաղաքում թեկնածու Սուսաննա Հարությունյանի ամուսնու գործարանը, միևնույն ժամանակահատվածում անհայտ մարդու կամ մարդկանց կողմից մի քանի կրակոցներ են արձակվել թեկնածու Հակոբ Ռաֆիկի Հակոբյանի (ներկայումս պատգամավոր, նախկինում Հանրապետական կուսակցության կուսակից), մարդազատ մեքենային: Երկու միջադեպերն էլ գտնվում են ոստիկանության հետաքննության ներքո:

Հակոբ Ռաֆիկի Հակոբյանը և Սուսաննա Հարությունյանը դուրս են հանվել գրանցումից Արմավիրի շրջանի առաջին ատյանի դատարանի ապրիլի 10-ին կայացրած վճիռով, ինչը բավարարել է այդ ընտրատեղամասում երրորդ թեկնածուի բողոքն ընդդեմ ԸԸՀ-ի՝ գրանցման վերաբերյալ որոշումների: Հայցվոր Հակոբ Վարշամի Հակոբյանի պնդմամբ թիվ 19 ԸԸՀ-ը Սուսաննա Հարությունյանին և Հակոբ Ռաֆիկի Հակոբյանին գրանցել էր չնայած այն փաստին, որ երկուսն էլ խախտել էին որպես «քաղաքացիական նախաձեռնությամբ» (անկուսակցական) առաջադրված թեկնածուների անհրաժեշտ պայմանը՝ այսինքն, նրանց դիմումները պետք է հաստատվեին նախաձեռնող խմբի բոլոր այն 50 անդամների վավեր ստորագրություններով, որոնք առաջադրել են նրանց թեկնածությունը:

Հաշվի առնելով գրանցումից դուրս հանելու այս երկու դեպքերը և գրանցումից հետո տեղի ունեցած մեկ ինքնաբացարկը՝ սույն շարադրանքի դրությամբ, մեծամասնական ընտրակարգով արձանագրվել է 132 թեկնածու՝ մեկ ընտրատարածքի կտրվածքով միջինում երեք թեկնածուներից մի փոքր ավելի: Յոթ ընտրատեղամասերում միայն մեկ թեկնածու է գրանցված:

Գ. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐՈՒՄ

Ընտրական օրենսգրքում կուսակցության/դաշինքի համամասնական ցուցակում [1] կանանց ներկայացման վերաբերյալ փոփոխված դրույթը բավարարելով՝ մրցակիցներից ոմանք մեծապես գերազանցել են իրենց ցուցակներում կանանց ներգրավվածության 15 տոկոսի, ինչպես նաև առնվազն յուրաքանչյուր տասներորդ տեղը կնոջը տրամադրելու անհրաժեշտ պահանջը: Ամենամեծ համամասնական ցուցակ ունեցող (90 թեկնածուից ավելի, համամասնական ընտրակարգով խորհրդարանական մանդատների թիվը) չորս

[1] Ընտրական օրենսգիրք, հոդված 100.2, փոփոխվել է 2005թ. մայիսի 19-ին:

կուսակցությունից ՀՅԴ ցուցակի 25,6 տոկոսը կազմում են կանայք (ամենաբարձր դիրքը ցուցակում՝ թիվ 4) և Օրինաց երկիրը՝ 23,3 տոկոս (ամենաբարձր դիրքը ցուցակում՝ թիվ 3), Բարգավաճ Հայաստանը՝ 16 տոկոս (ամենաբարձր դիրքը ցուցակում՝ թիվ 3) և Հանրապետական կուսակցությունը՝ 15,1 տոկոս (ամենաբարձր դիրքը ցուցակում՝ թիվ 7):[2] Գրանցված կուսակցությունների և դաշինքի կեսից ավելիի դեպքում ցուցակում ամենաբարձր դիրք զբաղեցնող կին թեկնածուն գտնվում է ցուցակի վերին հինգ տողում, չորսի դեպքում կին թեկնածուն զբաղեցնում է ցուցակի տասներորդ տողը:

Մեծամասնական ընտրակարգում 132 թեկնածուներից հինգը կին են, որոնք մրցակցում են երեք ընտրատեղամասերում:

Ազգային ժողովի ներկա յոթ կին պատգամավորներից հինգը վերընտրման են ձգտում իրենց համապատասխան կուսակցության ցուցակում:

III. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համաձայն ընտրությունների արդյունքներն ըստ ընտրատեղամասերի հրապարակելու վերաբերյալ ընտրական օրենսգրքի փոփոխությունների՝ ապրիլի 12-ին ԿԸՀ-ն հանրությանը ներկայացրել է նոր համակարգչային ցանց, որի միջոցով ԿԸՀ-ը կապված է 41 ԸԸՀ-ների հետ: Համակարգը հիմնականում նպատակաուղղված է մեծացնելու ընտրական գործընթացի և, մասնավորապես, քվեարկության արդյունքների աղյուսակավորման թափանցիկությունը: Կարևոր առանձնահատկություններն են՝ ԿԸՀ-ի կարողությունը հեռավորության վրա դիտելու ԸԸՀ-ի կողմից իրական ժամանակում աղյուսակավորման համակարգում ընտրությունների արդյունքների մուտքագրումը և տվյալների ուղիղ հեռարձակման հնարավորությունը մոտ 10 հեռուստաալիքներով, ինչպես նաև ինտերնետը:

Միջազգային դոնորների աջակցությամբ ԿԸՀ-ն ստեղծել է ընտրությունների օրվա կարգը բացատրող կարճամետրաժ մուլտիպլիկացիոն ֆիլմեր: Դրանք հեռարձակվում են յոթ ազգային հեռուստաալիքներով:

ԿԸՀ-ի նիստերի սահմանված ժամանակացույցը խստորեն չի պահպանվում, սակայն, այս, ըստ երևույթին, (գոնե մասամբ) բացատրվում է հանձնաժողովի կողմից անցկացվող՝ ընտրությունների հետ առնչվող այլ միջոցառումներով:[3] ԿԸՀ-ն անց է կացրել արտահերթ նիստեր. ապրիլի 4-ին՝ կուսակցությունների և դաշինքի համամասնական ցուցակները գրանցելու և ապրիլի 8-ին՝ համամասնական ընտրակարգի մրցակիցներին հեռուստատեսությամբ և ռադիոյով եթերաժամի հատկացման վիճակահանությունն անցկացնելու համար (տե՛ս՝ ստորև): Այդ երկու արտահերթ նիստերի մասին հանրությանը նախապես հայտարարվել է: Այնուամենայնիվ, նիստերին ԿԸՀ-ն քննարկում է որոշ հարցեր,

[2] ՀՅԴ – 113 թեկնածուներից 29-ը, Օրինաց երկիր – 120-ից 28-ը, Բարգավաճ Հայաստան – 112-ից 18-ը, Հայաստանի Հանրապետական Կուսակցություն – 111-ից 17-ը: Կանանց ամենաբարձր հարաբերությունը արձանագրվել է Միացյալ ազատական ազգային կուսակցության ցուցակում (18–ից 8-ը, 44.4 տոկոս): Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը միակ կուսակցությունն է, որի ցուցակում (ցուցակում ընդհանուր 18-ից 6-ը կին) առաջին տեղը կին է զբաղեցնում:

[3] Ընտրական օրենսգիրք, հոդված 39,4՝ «Հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը սահմանվում է ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից»: ԿԸՀ-ի նախագահի համաձայն՝ ԿԸՀ-ի հերթական նիստերը տեղի են ունենում յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի, ժամը 15:00-ին:

որոնք չեն հրապարակվում (տե՛ս ստորև բերված նախաքարոզչական միջոցառումների վերաբերյալ բողոքների շուրջ հրավիրված ԿԸՀ-ի նիստերը):[4]

ԸԸՀ-ները, ըստ երևույթին, լավ են պատրաստված ընտրություններին և աշխատում են ընդհանուր առմամբ կոլեգիալ միջավայրում: Այնուամենայնիվ, նշաններ կան, որ կոլեգիալության ոգին, հնարավոր է, որ ոչ մշտապես է գերակշռել ԸԸՀ ղեկավարության ընտրության հարցում. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ուղղակիորեն թիվ 41 ԸԸՀ-ի (Իջևան) նախագահի կողմից տեղեկացվել է, որ ինքն ընտրվել է Օրինաց երկրի կողմից նշանակված անձի փոխարեն այն բանից հետո, երբ վերջինս մարտի կեսին քվեարկության արդյունքում պաշտոնից ազատվեց (նա մնաց որպես ԸԸՀ անդամ) իր կուսակցության՝ կառավարական կոալիցիան լքելու հետևանքով: Նույն պատճառն է նշել է թիվ 12 ԸԸՀ-ի (Շենգավիթ) անդամը՝ Օրինաց երկրի կողմից նշանակված անձը, որը մարտի 12–ին հեռացվել է քարտուղարի պաշտոնից: Երկրի կտրվածքով ԸԸՀ-ի ղեկավար «եռյակներում» (նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար) գերակշռում են Հանրապետական կուսակցության, ՀՅԴ ներկայացուցիչները և Նախագահի նշանակված անձինք:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ վերջին ամիսներին որոշ ԸԸՀ-ի անդամության կազմը փոփոխվել է հիմնականում Օրինաց երկրի կողմից կատարված փոխարինումների պատճառով՝ ակնհայտորեն արտացոլելով ընդդիմություն անցնելուց ի վեր այդ կուսակցության ներսում տեղի ունեցող փոփոխությունները: Թիվ 31 ԸԸՀ-ի անդամ Օրինաց երկրի ներկայացուցիչը (կին նախագահը) փոխարինվել է համամասնական ցուցակում ընդգրկվելուց և մեծամասնական թեկնածու հաստատվելուց հետո:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն հաստատել է, որ մարտի 28-ին՝ հանգուցյալ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հուղարկավորության օրը, թիվ 19 ԸԸՀ-ի փակ լինելը (տե՛ս միջանկյալ զեկույց թիվ 1-ը) ոչ մի շոշափելի ազդեցություն չի ունեցել այդ ԸԸՀ-ի ընտրական գործընթացի վրա. այդ օրը վերջնաժամկետ ունեցող բոլոր աշխատանքներն արդեն կատարվել էին:

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրատեղամասերը ստեղծվել են մարտի 28-ին: Գոյություն ունեն 1,923 ընտրատեղամասեր, ինչն ավելի է, քան 2003 թվականին վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ (1,885), որը հիմնականում պայմանավորված է ընտրական օրենսգրքի փոփոխություններով, որոնք սահմանափակում են ընտրողների քանակը ըստ ընտրատեղամասի մինչև 2,000-ի: Ընտրատեղամասային հանձնաժողովները (ԸՏՀ-ները) պետք է կազմավորվեն ապրիլի 23-ից մինչև 26-ը ընկած ժամանակահատվածում:

Բ. ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

Ապրիլի 1-ին ԿԸՀ-ն ոստիկանությունից ստացել է ընտրողների համապետական ցուցակը և տեղադրել այն իր կայքում, իսկ հաջորդ օրը՝ բաշխված ըստ տեղամասերի:[5] Ընտրողների ընդհանուր թվի վերաբերյալ պաշտոնական հայտարարությունն արվել է ոստիկանության կողմից ապրիլի 9-ին, այն է՝ 2,313,482:

Համաձայն ապրիլի 1-ին ԿԸՀ-ից ստացված տեղեկատվության՝ ընտրողների միջին թիվն ըստ ընտրատարածքի կազմում է 56,426: Ըստ օրենքի, միջին թվից շեղումը չպետք է գերազանցի 15%-ը[6], սակայն արձանագրվել են երկու ԸԸՀ-եր՝ թիվ 14 ԸԸՀ-ը (Աշտարակ) և թիվ 32 ԸԸՀ-ը

[4] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդին ընդունել են 2007 թվականի ապրիլի 9-ին տեղի ունեցած մեկ նման նիստի այն բանից հետո, երբ ԿԸՀ-ում գտնվելու ժամանակ նրան ոչ պաշտոնապես տեղեկացրել էին, որ այդ նիստը տեղի է ունենում:
[5] www.elections.am
[6] Ընտրական օրենսգիրք, հոդված 17[1]

(Տաշիր)[7], որտեղ հակառակ պատկերն է: Վեց այլ ԸԸՀ-երում շեղումը 10%-ից ավելի է, ինչը թույլատրվում է «բացառիկ դեպքերում»:[8] Ընտրատեղամասերի սահմանման վերաբերյալ ԿԸՀ-ի որոշումը չի նշում, թե այս դեպքերում ինչպիսի հանգամանքներ են շեղման անհրաժեշտություն առաջացրել:

Ոստիկանությանը՝ Անձնագրերի և հրավերների վարչության միջոցով (առավել հայտնի իր ռուսերեն՝ ՕՎԻՐ հապավմամբ), հանձնարարված էր ընտրողների ցուցակների պատրաստումը՝ հիմնվելով 2005 թվականին սահմանված ընտրական օրենսգրքի փոփոխությունների վրա: Զգալի աշխատանք է կատարվել հաշվառման, անձնագրային և այլ գրանցումների տվյալները համակարգիչ մուտքագրելու ուղղությամբ, որոնց վրա և հիմնված է ընտրացուցակը: Մայիսի 12-ի ընտրությունների համար լրացուցիչ ջանքեր են գործադրվում անճշտություններն ուղղելու նպատակով (հիմնականում ավելորդ անունների և սխալ հասցեներում գրանցված ընտրողների նկատմամբ): Ապրիլի 9-ին ոստիկանության պետի առաջին տեղակալը և ՕՎԻՐ-ի տնօրենը լրատվամիջոցներով կոչ արեցին բնակչությանը համագործակցել և օգնել շտկելու ընտրացուցակները, հայտարարելով նաև ՕՎԻՐ-ի կողմից բացված երկու թեժ գծերի հեռախոսահամարները, որոնց միջոցով մարդիկ կարող են հայտնել անճշտությունների մասին: Այդ կոչը հնչեց նաև ԿԸՀ-ի նախագահի կողմից: Ոստիկանությունը նաև կատարում է հաշվառման տվյալների ճշգրտության ստուգումներ, դռնեդուռ այցեր կատարելով, ինչպես անում են քաղաքական որոշ կուսակցություններ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդների կողմից այցելած գրեթե բոլոր ԸՏՀ-ների տարածքներում ընտրացուցակները փակցված են եղել ընտրողների ստուգման համար: Փակցման համար օրենքով սահմանված ժամանակաշրջանը մեկնարկել է ապրիլի 3-ին:[9]

Գ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ յոթ բողոք է ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դեմ: Մեկը վերաբերում էր նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը բողոքարկված քարոզչությանը (տե՛ս հատված IVա, բերված ստորև): Երկուսը վերաբերում էին թաղապետարանների կողմից ընտրական պաստառների փակցման համար տեղերի հատկացմանը. ԿԸՀ-ն այս հարցերը ուղղել է համապատասխան համայնքային մարմինների (տե՛ս՝ ստորև): Մնացած բողոքները բարձրացնում էին քաղաքական կուսակցությունների գրանցման և դրանց կանոնակարգման օրինականության, ինչպես նաև ԶԼՄ-ների միջոցով սխալ հայտարարությունների տարածման հարցերը: ԿԸՀ-ն մերժել է այդ բողոքները իրավազորության բացակայության հիմքով: Արձանագրվել է «Գերագույն խորհուրդ - պատգամավորական ակումբ» հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից դատարան ներկայացրած 13 բողոք՝ ուղղված ԿԸՀ-ի գործողությունների կամ անգործության դեմ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գտնվում է գործերի հետ առնչություն ունեցող փաստաթղթերի ուսումնասիրման ընթացքում:

IV. ՔԱՐՈԶԶԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Վաղարշապատում նշված երկու առանձին դեպքերից բացի, որտեղ ապրիլի 7-ին վնաս էր հասցվել թեկնածուների սեփականությանը (տե՛ս՝ վերևում), ապրիլի 12-ին Բարգավաճ Հայաստանի Երևանի երկու թաղամասային շտաբների վնաս է հասցվել պայթուցիկների միջոցով: Ոստիկանական հետաքննությունը շարունակվում է, և ներկայումս դեռևս հայտնի չէ արդյոք

[7] Թիվ 14 ԸԸՀ-ը ունի 67,018 ընտրող, իսկ թիվ 32 ԸԸՀ-ը՝ 46,835:
[8] Ընտրական օրենսգիրք, հոդված 17[1].4
[9] Ինչպես նշված է թիվ 1 միջանկյալ զեկույցում, ընտրացուցակի մեջ կատարվող մուտքագրումները կարող են ստուգվել ԿԸՀ-ի կայքի միջոցով:

հանցագործները թիրախ դարձած կուսակցության քաղաքական հակառակորդներն էին, թե ոչ: Առավել լուրջ միջադեպ էր ապրիլի 2-ին Գյումրիի քաղաքապետի նկատմամբ գործած ակնհայտ մահափորձը, որի արդյունքում իր թիկնապահներից չորսը սպանվեցին, իսկ քաղաքապետը լուրջ վիրավորվեց: Թեև միջադեպի և ընտրությունների միջև եղած կապը պարզ չէ, քաղաքապետը Հանրապետական կուսակցությունից է, և կուսակցության խոսնակը ապրիլի 3-ին մամլո ասուլիսին հայտարարեց, որ հնարավոր է հարձակումը «կուսակցության դեմ էր ուղղված»:

Երևանի Ազատության հրապարակում հանրահավաքների հարցի վերաբերյալ (տե՛ս միջանկյալ զեկույց թիվ 1) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետագա հարցադրումները և հաշվետվությամբ ամփոփված այս ժամանակահատվածի զարգացումները ցույց են տվել, որ ոչ մի պաշտոնական արգելում, փաստորեն, չի գործադրվել: Երևան քաղաքի իշխանությունը պարզաբանել է, որ «Այլընտրանք» քաղաքացիական կազմակերպության թույլտվությունը մերժվել է, որի արդյունքում վերջինս բողոք է ներկայացրել դատարան այն հիմքի վրա, որ ժամերն ու տեղերն արդեն հատկացվել էին մեկ այլ կազմակերպության՝ Ազատության հրապարակում միջոցառում անցկացնելու համար: Քաղաքային իշխանությունը նաև նշել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ «Այլընտրանքին» առաջարկվել է հանդիպումների համար մեկ այլ տարածք,[10] թեև սա ակնհայտորեն չի երևում քաղաքային իշխանության կողմից «Այլընտրանքին» ուղղված գրավոր հաղորդակցությունից, որն ուսումնասիրվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Ազատության հրապարակում միջոցառումներ անցկացնելու համար «Այլընտրանքի» կողմից վերջերս ներկայացված այլ հայտերը հաստատվել են:

Ընտրական օրենսգիրքն արգելում է ընտրողներին նյութական շահագրգռումներ (ներառյալ ապրանքներ և ծառայություններ կամ դրանց խոստումները) առաջարկելը կամ տրամադրելը, որն առավել հայտնի է որպես «ձայների գնում», քարոզչության ընթացքում (ոչ մի նման սահմանափակում օրենքով նախատեսված չէ պաշտոնական քարոզարշավը նախորդող ժամանակահատվածում):[11] Առաջին հայացքից օրենքով սահմանված դրույթը, ըստ երևույթին, չի պահանջում հատուկ մտադրություն այդ միջոցներով ընտրողի վրա ազդել համար, որպեսզի այն խախտում արձանագրվի. փոխարենը՝ ենթադրվում է, որ պարզապես նման գործողությունը ընտրությունների քարոզարշավի ընթացքում արգելված է: Այնուամենայնիվ, գլխավոր դատախազը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ դատախազությունը կգործադրի այս դրույթը միայն այն դեպքերում, երբ նման մտադրություն կարող է ցուցաբերվել:

Մարտի 25-ին վախճանվեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, այնուհետ՝ ապրիլի 4-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը վարչապետ նշանակեց Սերժ Սարգսյանին: Ապրիլի 11-ին նախագահի կողմից նոր վարչակազմ նշանակվեց, որը էականորեն չի տարբերվում նախկին կառավարությունից, բացառությամբ, որ սույն շարադրանքի դրությամբ պարոն Ս. Սարգսյանի՝ պաշտպանության նախարարի նախկին պաշտոնը դեռ չի նշանակվել:

Ա. Նախաքարոզչական զարգացումներ

[10] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հանդիպումը Երևանի քաղաքապետի աշխատակազմի ղեկավարի հետ 2007թ. ապրիլի 17-ին: «Այլընտրանքը» դեռևս դատական կարգով վիճարկում է գործը: 2007թ. մարտի 22-ին առաջին ատյանի դատարանում գործը կորցնելուց հետո այն երկրորդ բողոքն է ներկայացնել առաջին ատյանի դատարան, որը լսումը տեղի է ունեցել 2007թ. մարտի 29-ին: Դատարանը կրկին վճռեց, որ քաղաքային իշխանությունների որոշումը համապատասխանում է Ժողովների, հավաքների, ցույցերի և հանրահավաքների մասին օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածներին: 2007թ. ապրիլի 6-ին «Այլընտրանքի» ներկայացուցիչները բողոքարկել են որոշումը Վճռաբեկ դատարան. այս շարադրանքի դրությամբ գործը գտնվում է ընթացքի մեջ:

[11] Ընտրական օրենսգիրք, հոդված 18.7՝ «Նախընտրական քարոզարշավի ընթացքում թեկնածուներին (կուսակցություններին)արգելվում է քաղաքացիներին անձամբ կամ այլ եղանակով տալ (խոստանալ) անվճար կամ արտոնյալ պայմաններով որևէ դրամ, սննդամթերք, արժեթղթեր կամ ապրանքներ, կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ»:

Ընտրական օրենսգիրքն ուղղակիորեն չի արտահայտում, թե արդյոք թույլատրվում է ընտրությունների մասնակիցների կողմից քարոզչական միջոցառումների անցկացումը նախքան պաշտոնական քարոզչական ժամանակաշրջանը:[12] ԿԸՀ-ն ընդունել է «Գերագույն խորհուրդ» ՀԿ-ի բողոքն ընդդեմ Օրինաց երկրի՝ բողոքելով նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը քարոզչական նյութերի ապօրինի բաշխման վերաբերյալ: Ապրիլի 9-ին ներքին խորհրդատվական նիստի ժամանակ ԿԸՀ-ն եկել է այն եզրակացության, որ նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը քաղաքական կուսակցությունների կողմից տեղեկատվության տարածումը չի կարող անօրինական քարոզչություն համարվել՝ ելնելով օրենքով հստակ սահմանված արգելքի բացակայությունից և սահմանադրությամբ ամրագրված քաղաքական արտահայտման և հավաքման իրավունքից: Հակառակ ԿԸՀ-ի դիրքորոշման, այնուամենայնիվ, դատախազության կողմից կարծիք արտահայտվեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ նախքան քարոզարշավը քարոզչության իրականացումը, փաստորեն, անօրինական է, սակայն դժվար կլինի առանձին խախտումները տարբերակել օրինական նախաքարոզչական շրջանում իրականացվող քաղաքական գործունեությունից: Բարգավաճ Հայաստանի կողմից ակնհայտ քարոզչություն կազմող նյութերը, մեծ փողոցային վահանակների տեսքով, ուղղակիորեն դիտարկվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից Երևանում ապրիլի 7-ին՝ ընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկից մեկ օր առաջ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղյակ չէ արդյոք, սույն շարադրանքի դրությամբ, պաշտոնական բողոք է ներկայացվել համապատասխան մարմիններին այս հարցի վերաբերյալ, թե ոչ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ուսումնասիրում է, թե արդյոք իրավական կարգավորման բացակայությունը և, հետևաբար, մինչև պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածը քարոզչության անցկացման համար չափազանց թույլատրական պայմանները կարող են ձախողել քարոզչական շրջանին վերաբերող իրավական կարգավորումներում արտացոլված սահմանափակումների նպատակը, հատկապես քարոզչության ֆինանսավորմանը վերաբերող սահմանափակումները:[13]

Բ. Պաշտոնական քարոզարշավի մեկնարկ

Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ մինչև ապրիլի 13-ը քաղաքային և համայնքային իշխանությունները հավասար պայմանների հիմունքներով քարոզչական նյութերի տեղադրման վայրեր սահմանեն: Պաշտոնապես սահմանված տարածքներից դուրս, որտեղ պետք է պաշտպանվեն հավասար հնարավորություններ, և առևտրական հիմունքներով վարձակալած վահանակներում գովազդից զատ, տիրում է գերթույլատրելության մթնոլորտ, որտեղ տարբեր քաղաքական կուսակցություններ և որոշ մեծամասնական թեկնածուներ լայնորեն ներգրավված են պետական և մասնավոր շենքերի ու շինությունների վրա պաստառների տեղադրման մեջ, հատկապես Երևանում: Իշխանությունները մինչ օրս չեն միջամտել այս հարցին՝ քաջ գիտակցելով, որ այս գովազդը օրենքով չի պաշտպանվում և կարող է հանվել հանրության անդամների կողմից: Երևանից դուրս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդները ցածր են որակավորում քարոզչական գովազդի առկայությունը:

Ապրիլի 11-ին Օրինաց երկիրը բողոք է ներկայացրել ԿԸՀ՝ համայնքի ղեկավարներից պաստառների գովազդային բովանդակության վերաբերյալ թույլտվություն ստանալու

[12] 23-րդ հոդվածն արգելում է քարոզչական շրջանի ավարտից հետո՝ ընտրությունների օրը և դրանից մեկ օր առաջ, քարոզչության անցկացումը: 113-րդ հոդվածը նշում է, որ «Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում նախընտրական քարոզարշավը անց է կացվում սույն օրենսգրքի 18-23 հոդվածներում սահմանված կարգի և ժամանակացույցի համաձայն: Այնուամենայնիվ, միակ դրույթը, որտեղ հատուկ նշվում է այս մասին, ամփոփված է 23-րդ հոդվածում:

[13] Ընտրական օրենսգիրք, հոդված 112, «Պատգամավորության թեկնածուների կամ կուսակցությունների նախընտրական հիմնադրամը»

արգելքների մասին: Համաձայն տեղեկատվության, որը սահմանում է 2007 թվականի ընտրությունների կանոնները և որը համատեղելի է 2006 թվականի ապրիլի 27-ի Երևանի քաղաքապետի որոշման հետ, վահանակի արտաքին տեսքի էսկիզը պետք է հաստատվի տեղական համայնքի ղեկավարի կողմից: ԿԸՀ-ն բողոքն ուղղել է քաղաքային իշխանություններին՝ պահանջելով տեղեկացնել արդյունքի մասին: Երկու քաղաքական կուսակցություններ արդեն հայտնել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք ի վիճակի չեն եղել Երևան քաղաքում գտնել վահանակի տարածք, քանի որ բոլորը վաճառված է: Միևնույն ժամանակ, Երևանով մեկ չափազանց ակնհայտ երևում է Հայկական բանակի 15-րդ տարեդարձին նվիրված պաստառային արշավը: Այն կազմակերպվել է Պաշտպանության նախարարության կողմից, մեկնարկել է 2007 թվականի սկզբին և ըստ ծրագրի կտևի մինչև առնվազն մայիսի 9-ը (Հաղթանակի օրվա առթիվ տոն):

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ քաղաքային և համայնքային իշխանությունները պետք է հավասար և անվճար հիմունքներով տարածքներ տրամադրեն քաղաքական կուսակցություններին և թեկնածուներին քարոզչական հանդիպումների համար: Օրինաց երկիրը բողոքել է ԿԸՀ-ին, որ կուսակցությանն առանց ողջամիտ հիմնավորման դահլիճներ են մերժվել Սպիտակ և Վանաձոր քաղաքներում, և, որ Սպիտակի քաղաքապետը 100,000 ՀՀ դրամ (€200) է խնդրել հանդիպման համար տարածքի տրամադրման համար: Ոչ մի այլ կուսակցություն չի նշել հանդիպումների համար տարածքի ձեռքբերման հարցում դժվարություններ հանդիպելու մասին:

V. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Մարտի 22-ից մեկնարկած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի՝ լրատվամիջոցների մոնիտորինգից ի վեր մինչև ապրիլի 8–ին պաշտոնական քարոզարշավի մեկնարկը լրատվամիջոցները միայն հետզհետե են հետաքրքրություն ցուցաբերել ընտրական զարգացումներին անդրադարձման նկատմամբ: Լուսաբանումը մասամբ մթագնվել է վարչապետի հանկարծակի մահով և դրան հաջորդող զարգացումներով: Պաշտոնական քարոզարշավը մեկնարկելու պահից արդեն իսկ նկատելի աճել է քարոզչական միջոցառումների նկատմամբ լրատվամիջոցների ուշադրությունը, իսկ ընտրությունների մրցակիցները ավելի հաճախ են հանդես գալիս՝ ներառյալ *Երկիր Մեդիա* ալիքի կողմից կազմակերպվող բանավեճերում:

Պաշտոնական ընտրարշավի մեկնարկին նախորդող ժամանակահատվածում քարոզչության կանոնակարգման բացակայությունը նկատելի էր նաև լրատվամիջոցներում: *ԱԼՄ հեռուստաընկերությունը, Կենտրոն հեռուստաընկերությունը* և *Հրազդան հեռուստաընկերությունը* նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը քաղաքական նյութեր են հեռարձակել համապատասխանաբար Ժողովրդական կուսակցության [14], Բարգավաճ Հայաստանի և Միացյալ աշխատանքային կուսակցության համար:

Ապրիլի 8-ին ԿԸՀ-ն վիճակահանություն է անցկացրել սահմանելու պետական ֆինանսավորում ունեցող լրատվամիջոցներով համամասնական ընտրակարգի մրցակիցների համար անվճար և վճարովի եթերաժամի հերթականությունը: Յուրաքանչյուր գրանցված կուսակցության և դաշինքի համար ընտրական օրենսգրքի դրույթով սահմանված հանրային հեռուստաընկերությամբ և հանրային ռադիոյով համապատասխանաբար մինչև 60 և 120 րոպե անվճար եթերաժամը իրականում նշանակում է օրեկան երկու րոպե հեռուստատեսությամբ և չորս րոպե ռադիոյով: Համաձայն Հանրային հեռուստատեսության մենկնաբանությանը՝ ԿԸՀ-ի՝ քարոզչական հոլովակների անվճար եթեր հեռարձակում սահմանող կանոնակարգը [15]

[14] *ԱԼՄ հեռուստաընկերությունը* պատկանում է Ժողովրդական կուսակցության ղեկավարին:
[15] Հանրային հեռուստատեսությունը (Հ1) պարտավոր է հեռարձակել հոլովակները 17:15–ից մինչև ժամը 21:00-ը, իսկ հանրային ռադիոն՝ երկու բլոկով՝ ժամը 13:30-ից մինչև 16:00-ը և 21:40-ից մինչև 23:50-ը:

նշանակում է, որ այն կարող է հեռարձակվել օրվա համար նախատեսված բոլոր հոլովակները մեկ առանձին բլոկով: Ներկայումս դա տեղի է ունենում հատկացված ժամանակահատվածի շրջանակում, սակայն դուրս է փրայմթայմ համարվող ժամերից: ԿԸՀ-ն արդեն ստացել է ժամանակահատվածը փոխելու երկու դիմում:

Մինչ երկրի առաջատար մասնավոր հեռուստաալիքների մեծ մասը որոշել է եթեր հատկացնել ընտրարշավին՝ հրապարակելով վճարովի քաղաքական գովազդի իրենց սակագները, որոշ տեղական հեռուստաընկերություններ որոշել են կամ չընդունել որևէ գովազդ (օրինակ՝ Շիրակի մարզում), կամ սահմանափակել գովազդը մեծամասնական ընտրակարգով մրցակիցների համար: Երկրի տարածքով հեռարձակվող հեռուստաալիքների՝ քարոզչական գովազդի սակագները, ըստ երևույթին, բարձր են ըստ տեղական չափանիշների (*Արմենիա հեռուստաընկերության* սակագինը ամենաբարձրն է՝ րոպեի արժեքը 130,000 ՀՀ դրամ (€260), հատկապես համեմատած ընտրական քարոզարշավից դուրս ընկած կոմերցիոն սակագների հետ: Քաղաքական ուժերի զգալի մասն իրենց մտահոգությունն է բարձրացրել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին՝ մատնանշելով, որ արգելք ստեղծող բարձր գները թույլ են տալիս միայն սահմանափակ կերպով օգտվել քարոզչության այս եղանակից:

Պաշտոնական քարոզարշավի շրջանից առաջ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից լրատվամիջոցների մոնիտորինգի նախնական արդյունքներով մոնիտորինգի ենթարկված լրատվության լուսաբանումը, ընդհանուր առմամբ, բնութագրվում է կառավարության գործունեության լայնածավալ լուսաբանմամբ և ընտրությունների մրցակիցներին ուղղված նվազագույն քննադատությամբ՝ դրական հայտարարությունների գերակշռմամբ (բացառությամբ *RFE/Ռադիո Ազատության*): *Երկիր Մեդիա, Շանթ* և *Կենտրոն հեռուստաընկերություններն* առաջարկել են իրենց հեռուստադիտողներին քաղաքական հյուրերի մասնակցությամբ ընթացիկ իրավիճակի մասին հերթական ծրագրեր (թեև այս ալիքները Երևանից դուրս սահմանափակ հեռարձակում ունեն): *Կենտրոն հեռուստաընկերությունը* ցուցաբերում է հստակ նախապատվություն Բարգավաճ Հայաստանի նկատմամբ: *ԱԼՄ Հեռուստաընկերությունը* բազմաթիվ թոք-շոուներում առաջ է տանում Ժողովրդական կուսակցությանը և իր առաջնորդին:

Հանրային Հ1 հեռուստաընկերությունը կառավարությանը տրամադրել է իր քաղաքական փրայմթայմի լրատվական լուսաբանման 43 տոկոսը, իսկ նախագահին՝ 9 տոկոսը, բացառապես չեզոք և դրական երանգավորմամբ: Ինչ վերաբերում է կուսակցություններին և դաշինքներին, լուսաբանման հիմնական մասը նվիրված էր Հանրապետական կուսակցությանը՝ 16 տոկոսը նույնպես չեզոք և դրական երանգավորմամբ: Ինչ վերաբերում է այլ քաղաքական ուժերին, Օրինաց երկիրը և ՀՅԴ-ը ստացել են համապատասխանաբար 5 և 4 տոկոս լուսաբանում՝ հիմնականում չեզոք և դրական: Մոնիտորինգի ենթարկված այլ հեռուստաալիքների մեծ մասը նույն մոտեցումն է ցուցաբերում, օրինակ՝ *Հ2-ը* կառավարությանը հատկացրել է մոնիտորինգի ենթարկված իր լուսաբանման 57 տոկոսը, իսկ *Արմենիա հեռուստաընկերությունը* Հանրապետական կուսակցությանը հատկացրել է 41 տոկոս. երկու դեպքում էլ լուսաբանումը բացահայտ դրական է կամ չեզոք: *RFE/Ազատություն Ռադիոն* և *Երկիր Մեդիան* իրենց լսարաններին առաջարկել են առավել հավասարակշիռ մոտեցում:

Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից ի վեր լրատվամիջոցների աշխատանքի մոնիտորինգի նախնական արդյունքները կարտացոլվեն հաջորդ միջանկյալ զեկույցում:

VI. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հիմնական թիմը, որի ղեկավարն է Առաքելության ղեկավար դեսպան Բորիս Ֆոլեցը , ընթացիկ աշխատանքային կապ է պաշտպանում և սերտորեն համագործակցում

է ԿԸՀ-ի հետ: Նմանապես, երկարաժամկետ դիտորդների 14 խմբերը հիմնականում սերտ աշխատանքային կապ են պաշտպանում ԸԸՀ-ների հետ. միայն մեկում՝ թիվ 18 ԸԸՀ-ում (Արարատ – Վեդի), դիտվում է թերի համագործակցություն ԸԸՀ-ի ղեկավարության կողմից:

Քաղաքական կուսակցությունների հետ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի շփումները, ընդհանուր առմամբ, լավ են ընթացել ղեկավարական և աշխատանքային մակարդակներով: Նկատելի բացառություն է կազմում Բարգավաճ Հայաստանը. Առաքելության ղեկավարի և համամասնական ցուցակով վերին դիրքեր զբաղեցնող թեկնածուների միջև հանդիպման համաձայնեցման նպատակով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից հաստատված կապի արդյունքում, սույն շարադրանքի դրությամբ, հանդիպումը տեղի չի ունեցել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի ԵԴ-ները շարունակում են կապ պաշտպանել տեղական կուսակցությունների ներկայացուցիչների և մեծամասնական թեկնածուների հետ և երկրի տարածքով մեկ դիտարկել քարոզչական աշխատանքները:

Նախապատրաստական աշխատանքները շարունակվում են 300 կարճաժամկետ դիտորդներին (ԿԴ-եր) ընդունելու ու տեղաբաշխելու ուղղությամբ, որոնք կօժանդակեն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին, ինչպես պահանջվում է ԵԱՀԿ անդամ պետությունների կողմից ընտրությունների օրը դիտարկելով: Ի հավելումն՝ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)և Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունները կհետևեն մայիսի 12–ի ընտրություններին: Ապրիլի 10-ին ԵԱՀԿ Նախագահը ԵԱՀԿ ԽՎ Փոխնախագահ Թոնե Թինսգորդին նշանակել է որպես ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն հանդիպել է ԵԱՀԿ ԽՎ-ի և ԵԽ ԽՎ-ի պատվիրակությունների հետ ապրիլի 9-ի շաբաթվա ընթացքում Հայաստան կատարած իրենց նախընտրական այցի շրջանակներում: